

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱԽՈՍԼԱԻ ԵԿԵՂԵՑԻ

Церк. Вѣст. № 14 — 15

Սինոդի որոշումն եկեղեցի—դպրոց շինելու մասին.

Գիւղացիներն ազատութեան յիսնամեակը յաւերժացնելու համար Սրբ. Սինոդին միջնորդութիւն էր եղել, որ այն գիւղերում, ուր չը կան եկեղեցիներ, շինուին եկեղեցի—դպրոցներ: Այս միտքը նոր չէ. և շատերը համակրութեամբ վերաբերուեցին, ի նկատի ունենալով արտաքին յարմարութիւնը, բայց եկեղեցի—դպրոց մի շինութեան մէջ սարքելու հենց առաջին դէպքում յայտնի եղան հետեւեալ անյարմարութիւնները. ա. եկեղեցի—դպրոց շինելու ժամանակ փոփոխուում են արտաքին պայմանները՝ որի մէջ գտնուում է եկեղեցին՝ դպրոցի վերաբերութեամբ. Աստուծոյ տաճարը իբրեւ առանձին շէնք, քաղաքներում և գիւղերում, չափահասների և անչափահասների աչքում վսեմ է երևում, դպրոցի հետ մի շէնքի մէջ լինելով նսեմանում է, և կարծես դպրոցից կախումն ունենում: Բ. հենց եկեղեցի—դպրոց կոչումն թիւրիմացութեան առիթ կը տայ. եկեղեցին կարծես հաւասարւում է դպրոցին, և նրա հետ մի և նոյն աստիճանի արժէքի հաւասարւում: Գ. Այն էլ շատ յարմար չէ, որ եկեղեցին դպրոցական շէնքի մէջ իւր գոյութեամբ կարծես պարտական է դառնում դպրոցին, որպէս թէ, եթէ չլինէր դպրոցը, չէր լինի և եկեղեցի այս կամ այն տեղում: Դ. անկախ այս բանից նկատուել է, որ եկեղեցուն կից դպրոցում սովորող մանուկները, իրանց հասակին յատուկ վառվռուն բնաւորութեամբ, չեն կարող լուրջ և երկիւղած վերաբերմունք ունենալ դէպի այն վայրը, ուր նրանք գտնուում են, մանաւանդ դասամիջոցներին:

Այլ և դասարանական կահաւորութեան բնաւորու-

թիւնը առարկայական պատկերներով, և դպրոցական պարագմունքները այնպիսի առարկաներից, որպիսի են աշխարհիկ երգերը, առակների և հէքաթների ընթերցմունքը—այս բոլորը չեն համապատասխանում տաճարի սրբութեանը և անկասկած՝ թուլացնում են մանուկների երկիւղած զգացմունքը դէպի այն, և հասակաւորի համար էլ գայթակղութեան պատճառ դառնում:

Սրբազնագոյն Սինօդը, ի նկատի ունելով այս ամենը, համաձայն Դպրոցական Խորհրդի եղբակացութեան որոշում է. Церк. Ведомости-ի միջոցով յայտնել թեմական առաջնորդներին հետեւեալ հրահանգութիւնները. — Ապագայում մի և նոյն շէնքի մէջ եկեղեցի—դպրոց կազմակերպելը թոյլ տալ շատ սակաւ և բացառիկ դէպքերում, երբ ամենեին հնար չը կայ առանձին եկեղեցի կառուցանել ծխական եկեղեցուց հեռու գիւղում: Այլև կոնոն դարձնել, որ այդպիսի եկեղեցի—դպրոց—ի շէնքի համար յատակագիծ ուրուանկար կազմելիս՝ որոշակի ջսկոյի շինութեան մէջ եկեղեցին թէ արտաքուստ և թէ ներքուստ, որ հասակաւորների և մանուկների աչքում եկեղեցին դպրոցական շէնքի մէջ գլխաւորը հանդիսանայ: Անկախ սրանից, պէտք է հսկել, որ շէնքի մէջ եկեղեցին աչքի ընկնող դիրք ունենայ, մի անկիւնում չլինի, որպէս դպրոցի մի յաւելում և դպրոցի համեմատութեամբ՝ փոքր ու նեղուածք էլ չլինի: Այժմ դպրոցի մէջ եկեղեցին մեծ մասամբ այն աննշան մասն է կազմւում, որ իսկապէս եկեղեցուն պատկանում է միայն բեմն ու սեղանը, այնուհետև դրւում է շարժական վանդակապատ, որը մի կողմ է տարւում միայն ժամերգութեան ժամանակ: Հարկ է որոշ տարածութիւն թողնել տաճարի միջին մասի համար էլ և տաճարի այդ մասում կողքից առանձին մուտք յարմարեցնել: . . . Եկեղեցին դպրոցում պէտք է արտաքուստ ևս որոշուի, և ցանկապատը պէտք է տարբերուէր միւս շինութիւնների ցանկապատերից, կրելով խաչի նշաններ: Այդ վանդակապատին պատշաճ տեղում պէտք է դրուի դասարանական սուրբ պատկերը՝ առաջին կանթեղ, Այս-

տեղ պէտք է ուսանող մանուկները աղօթքի կանգնեն.... Այդ տեսակ հաստատութիւնները պէտք է կոչուին ոչ թէ եկեղեցի-դպրոց, այլ եկեղեցի՝ դպրոցի հետ միասին։ Աւելի պարզութեան համար հարկ է որոշել, թէ ում անուան է նուիրուած տաճարը օր. այս ինչ գիւղի Փրկչի, Պետրոս Պօղոսի կամ Նիկողայոսի եկեղեցի՝ դպրոցի հետ, որը պէտք է որոշի եկեղեցին դպրոցից, և տալ նրան որոշ անուն և նշանակութիւն։

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Փորձուցալիայում եկեղեցու բաժանումն պետութիւնից,

Էրազմները հաղորդում են, որ Լիսաբոնում նախարարների խորհուրդը հաւանել է Փորթուգալիայում եկեղեցին պետութիւնից բաժանելու ծրագիրը, որ կազմել է իրաւանց նախարար Կոզա։

Կաթոլիկ դաւանութեան մասին ծրագրի հիմնական կէտերն են. կաթոլիկական կրօնը այլևս պետական կրօն չէ և հաւասարում է բոլոր միւս կրօններին, ժողովրդին տրւում է կրօնի լիակատար ազատութիւն. մի դաւանութիւնից միւս դաւանութեան անցնելը ազատ է։ Եկեղեցիները կը պահպանուեն հաւատացեալների միջոցներով, քահանաներին, որոնք օրէնքը հրատարակուելիս ծուխ կուռնենան, պետութիւնը կը նշանակի տարեկան ցմահ օժանդակութիւն, նոր ձեռնադրուող քահանաները պէտք է բաւականանան հաւատացեալների տուրքերով։ Եկեղեցու հաշուապահութիւնը կը ենթարկուի պետութեան հսկողութեանը, նոր քահանաները կը նշանակուեն միայն պետութեան հաւանութեամբ, եկեղեցիները կը հրատարակուեն պետութեան սեպհականութիւն. ծխականներին թոյլ կը տրուի եկեղեցիներով ձրի օգտուել։ Պետութիւնը այլևս չընդունելով կաթոլիկական կրօնքը, հակառակ չի լինի քահանաների ամուսնութեան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Ս. գրի անգլիերէն քարգմանութեան 300 ամեակը.

Ս. գիրքը անգլիերէն պաշտօնական թարգմանութեամբ հրատարակուել է 1611 թուին. Յակով I թագաւորի հրամանով: Այս տարի մարտի մէջ մեծ հանդիսաւորութեամբ տօնուել է այդ հրատարակութեան 300 ամեակը: Թէև 1881—1885 թ. հրատարակուել է Ս. գիրքի «վերստուգուած» (Revised Version), թարգմանութիւնը, բայց նախկինը իւր քարձր յատկութեան պատճառով յարգի է: Церков. Вѣст. (№ 14—15) ասում է. «Այս ժամանակի ընթացքում անգլիական ժողովուրդը բնականօրէն «պաշտօնական» թարգմանութեանը, Ս. գիրքը մայրենի լեզուով, ինչպէս անգլիացիք մինչև անգամ կաթոլիկները, ընդհանրապէս խոստովանում են, «արմատներ է ձգել» ժողովրդի սրտի մէջ. իւր ազդեցութիւնն արել է նրա թէ լեզուի և թէ բնաւորութեան վերայ: Յօրելեանի առիթով Քէնտրբորիի արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ մի պատգամաւորութիւն է ներկայացել թագաւորին, մատուցել է մի օրինակ Ս. գիրք: Ներկայանալու ժամանակ ուղերձի մէջ, որ կարդացել է արքեպիսկոպոսը, շեշտուել է, թէ ինչպիսի անգնահատելի բարիք է եղել անգլիերէն խօսողների համար մայրենի լեզուով թարգմանած Ս. գիրքը, և ինչ ազդեցութիւն է արել անգլիական ազգի կեանքի բոլոր երևոյթների վերայ:

«Կայսերութեան զարգացումն ու ուժը, ասում է աղերձի մէջ, շատ բանով պարտական են անգլիական Ս. գրքին. նա քաղցրացրել է ընտանեկան կեանքը, նա մաքուր լեզուի տիպար է դարձել. նա թափանցել է գրականութեան և գեղարուեստի մէջ. նա կարողացել է հեռացնել սօցիալական զանազան թշուառութիւնները, բարւոքել է մշակների գրութիւնը, նա փոխել է թագաւորութեան օրէնքները և ձեռնկերպել է ազգային բնաւորութիւնը, նա նպաստել է

միջազգային բարեկամութեան և մարդկանց համե-
րաշխութեան: Բայց որ ամենից գլխաւորն է, Ս. գրքի
անգլիական թարգմանութիւնը Հօր Աստուծոյ յայտ-
նութիւնը, Իւր Որդի մեր Տէր Յիսուս Քրիստոսի մա-
սին, մատչելի է դարձրել մեզ: Զգում ենք, որ բրի-
տանական ժողովուրդը ինչքան շատ բան է պարտա-
կան այդ գրքին, որ նրա թարգմանութեան 300 ամ-
եակը... պէտք է կատարուի որպէս ազգային երախ-
տագիտութեան տօն»:

Անգլիական Ս. գրքին նուիրուել են յօբելենական ճա-
ռեր և քարոզներ. Հօնգօնում եղել են միտինգներ. ճա-
ռեր են խօսել Քէնտրբրիի արքեպիսկոպոսը, նախագահ
մինիստր Ասկվիտը ամերիկական դեսպանը... Բրիտանա-
կան մուզէում և Բրիտանական ու այլազգի բիբլիական
ընկերութեան շինութեան մէջ յօբելեանի առիթով Ս. գրքի
ցուցահանդէս է եղել: Միայն կաթոլիկ անգլիացիները չեն
մասնակցել յօբելենական հանդէսներին, որովհետեւ այդ
հանդէսներին վերագրում էին զուտ բողոքական միտք Ս.
գրքի և նրա մեկնութեան մասին:

Յ. Ա. Ե.

